

**Գործունեության հաշվետվություն
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

31 դեկտեմբերի 2021թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Կազմակերպության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն	6
Կազմակերպության գործունեության հաշվետվություն	7

ԱՆԿԱԽ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Համայնքների Միություն» ՀԿ խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Համայնքների Միություն» Հասարակական Կազմակերպության (այսուհետ Կազմակերպություն) 2021թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընդգրկող ժամանակաշրջանի գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն):

Կազմակերպության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է հիմք ընդունելով նաև «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 15 փետրվարի 2019թ.-ի թիվ 102 -ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների վրա:

Մեր կարծիքով՝ կից ներկայացված հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2021 թվականի տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը: Ինչպես նաև դրամական միջոցների օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 15 փետրվարի 2019թ.-ի թիվ 102 -ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պարասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:



MELIKYANS & CO

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար.

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար.

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:



MELIKYANS & CO

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արամ Մելիքյան

Տնօրեն՝

Ռոբերտ Մելիքյան

Առաջադրանքի պատասխանատու

Աուդիտոր՝

28 Հունվար 2022թ.

Կազմակերպության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի Համայնքների Միություն» Հասարակական Կազմակերպությունը ստեղծվել է 2009 թվականի սեպտեմբերի 07-ին:

Միությունը հիմնադրվել է «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միության (211.150.05154, գրանցված՝ 2009-09-07-ին, ՀՎՀՀ՝ 03534085)-ի ՀՀ օրենսդրության համաձայն վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Բարեկամության 1:

Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են.

- Խթանել և նպաստել տեղական ինքնակառավարման և ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում, առաջ մղել և պաշտպանել իր անդամ համայնքների իրավունքներն ու օրինական շահերը,
- Նպաստել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանն ու Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի և ՀՀ սահմանադրությամբ ու օրենքներով սահմանված սկզբունքների արդյունավետ կիրառմանը ընդհանուր նաև նպաստել դրանց վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,
- Հանդես գալ որպես Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների միասնական ձայն կառավարության և պետական այլ մարմինների, միջազգային կառավարությունների հետ հարաբերություններում՝ արդյունավետ կերպով ներկայացնելով իր անդամ համայնքների շահերը և ապահովելով իր անդամ համայնքների իրավունքների/շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությունը,
- Ներազդել քաղաքական օրակարգի վրա, դրական դերակատարում ունենալով, պետական կառավարման բոլոր մակարդակներում, ներառյալ ակտիվ մասնակցություն համապատասխան խորհրդակցությունների, համագործակցությունների և բանակցությունների գործընթացների ընթացակարգերի մշակման և դրանց կիրառման գործընթացներում,
- Աջակցել Միության անդամներին՝ տրամադրելով նրանց խորհրդատվական կարողությունների զարգացման և այլ անհրաժեշտ ծառայություններ՝ հանդես գալով որպես համագործակցության, փորձի փոխանակման և կարողությունների զարգացման հարթակ,
- Նպաստել Հայաստանում ժողովրդավարական արժեքների՝ ներառյալ ընտրական համակարգում բարեփոխումների, ժողովրդավարական քաղաքական ու իրավական մշակույթի և քաղաքացիական հասարակության զարգացման ամրապնդմանը:

Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը 2021թ. կազմել է 5 մարդ:

31 դեկտեմբեր 2021թ. դրությամբ Կազմակերպության անդամների քանակը 79 է:



Կազմակերպության գործունեության հաշվետվություն

Մեր կողմից ուսումնասիրվել են 2021 թվականին կատարված մուտքերի և ելքերի/ծախսերի տրամադրված հիմնավորումները:

Մուտքեր- 22,350,050 դրամ, այդ թվում

Անդամավճար՝

Դրամ	2021թ.
1 Երևանի քաղաքապետարան	11,000,000
2 Գյումրու համայնք	1,573,320
3 Վանաձորի համայնք	776,000
4 Էջմիածնի համայնք	569,740
5 Աբովյանի քաղաքապետարան	500,000
6 Աշտարակի համայնք	500,000
7 Կապանի համայնք	452,000
8 Գորիսի համայնք	395,090
9 Գավառի քաղաքապետարան	291,460
10 Մասիսի քաղաքապետարան	220,000
11 Անի քաղաքապետարան	213,440
12 Արթիկի համայնք	202,990
13 Գլաձորի համայնք	200,000
14 Դվինի համայնք	200,000
15 Իջեվանի համայնք	190,990
16 Ախուրյանի համայնք	174,440
17 Նոյեմբերյանի համայնք	167,820
18 Տաշիրի համայնք	158,650
19 Սպիտակի համայնք	152,000
20 Բյուրեղավանի քաղաքապետարան	121,140
21 Արենիի համայնք	117,840
22 Մարմաշենի համայնք	111,070
23 Ջրվեժի համայնք	105,110
24 Ակունքի համայնք	100,000
25 Ամասիայի համայնք	100,000
26 Այգեգարդ համայնքի	100,000
27 Աշոցքի համայնք	100,000
28 Առինջի համայնք	100,000
29 Արալեզ համայնք	100,000
30 Արևաշողի համայնք	100,000
31 Արևշատի Համայնք	100,000
32 Արմաշի համայնք	100,000
33 Բալախովիտի համայնք	100,000
34 Բաղրամյանի համայնք	100,000
35 Բարձրաշենի համայնք	100,000
36 Գառնիի համայնք	100,000
37 Գետարգելի համայնք	100,000

**MELIKYANS & CO**

Դրամ	2021թ.
38 Գոռավանի համայնք	100,000
39 Եղվարդի համայնքապետարան	100,000
40 Թալինի Համայնք	100,000
41 Թումանյանի համայնք	100,000
42 Լանջազատի համայնք	100,000
43 Լեռնապատի համայնք	100,000
44 Լոռի-Բերդի համայնք	100,000
45 Ծաղկաձոր համայնք	100,000
46 Հովտաշատի գյուղապետարան	100,000
47 Մալիշկայի համայնք	100,000
48 Մարգահովտի համայնք	100,000
49 Մեծավանի համայնք	100,000
50 Մեղրաշենի համայնք	100,000
51 Նորատուսի համայնք	100,000
52 Նոր-Կյանքի համայնք	100,000
53 Շամիրամի համայնք	100,000
54 Շողակաթի համայնք	100,000
55 Ջերմուկի քաղաքապետարան	100,000
56 Սարապատի համայնք	100,000
57 Սարչապետի համայնք	100,000
58 Տեղի համայնք	100,000
59 Փարաքարի համայնք	100,000
60 Օշականի համայնք	100,000
61 Շենիկի համայնք	50,000
62 Փարպիի համայնք	50,000
63 Կարմրաշենի Համայնք	40,000
64 Ոսկեհատի համայնք	32,000
65 Շահումյանի համայնք	30,000
66 Լերմոնտովոյի համայնք	20,000
67 Լճափի համայնք	12,350
68 Երասխի համայնք	10,000
69 Վարդաշենի համայնք	6,600
70 Բերքաբերի համայնք	6,600
Ընդամենը՝	22,350,050



MELIKYANS & CO

Ելքեր/Ծախսեր- 21,538,207

այդ թվում

Դրամ	2021թ.
1 Աշխատավարձ, այդ թվում քաղաքացիաիրավական հիմունքով վարձատրություն	17,117,071
2 Վարձակալություն	2,666,736
3 Աուդիտորական, խորհրդատվական և հաշվապահական ծառայություններ	1,210,000
4 Տելեկոմ Արմենիա ՓԲԸ	413,947
5 ՄՏՍ Հայաստան ՓԲԸ	72,603
6 ՊԻԿՈ-ՎԻԿՈ ՍՊԸ	37,200
7 ԷՎՐԻ ԴԵՅ ՓԲԸ	20,650
Ընդամենը՝	21,538,207

Դրամական միջոցների մնացորդը 31 դեկտեմբեր 2021թ-ի դրությամբ կազմել է՝ 493,285 դրամ, այդ թվում.

- Արդշինբանկի հաշվարկային հաշիվ - 493,285 դրամ

Բոլոր հիմքերը առկա էին և ձևակերպված էին 31 դեկտեմբեր 2021թ-ի դրությամբ:

«Մելիքյանս ընդ քո» ՍՊԸ

Արամ Մելիքյան

Տնօրեն՝

Ռոբերտ Մելիքյան

Առաջադրանքի պատասխանատու

Աուդիտոր՝

28 հունվար 2022թ.